


Swedish Manuscript Guide







### ԲԱԳՐՆՎԱՆԴ

«Հայ ժողովրդական հեքիաթներին» գիտական հրատարակության ներկա հատորը բովանդակում է պատմական Հայաստանի էրզրումի վիլայեթի մեջ մտնող Ալաշկերտի գավառի և Բաղեշի վիլայեթի մեջ մտնող Մանազկերտի և Բիթլիսի ժողովրդական հեքիաթները:

Ալաշկերտի գավառի հեքիաթներից մեծ մասամբ տեղ են գտել Գարաքիլիսե գյուղի բարբառով եղած հեքիաթները:

Այս բաժնի համար որպես սկզբնաղբյուր օգտագործված են մեծ մասամբ Հայ բանահյուսության երախտավոր Երվանդ Լալայանի և նրա կազմակերպած բանահյուսական խմբարշավի անտիպ նյութերը, մասամբ էլ Սարգիս Հայկունու հավաքած նյութերը:

Ալաշկերտի բարբառով եղած 44 հեքիաթներից 32-ը անտիպ են և տպագրվում են առաջին անգամ, իսկ 12-ը, որոնք հավաքել է Ս. Հայկունին՝ հրատարակված են «Էմինյան ազգագրական ժողովածուին» երկրորդ և չորրորդ հատորներում:

Ալաշկերտի բաժնում եղած անտիպ նյութերը պահպանվում են Հայկական ՍՍՀ ԳԱՀԱԻ բանահյուսության արխիվի Երվանդ Լալայանի ֆոնդում: Այս նյութերը օրի են առնվել 1915—1916 թթ. Լալայանի կազմակերպած ու զլխավորած խմբարշավի կողմից: Ինչպես հայտնի է, Լալայանը 1915—1916 թթ. կազմակերպեց Հայ մտավորականներից բաղկացած մի խմբարշավ, որի մեջ մտնում էին Բսնահավաքներ Նազարեթ Մարտիրոսյանը, Արտաշես Բարսեղյանը, Սենեքերիմ Շալեյանը, Երվանդ Պեղազյանը, Մարտիրոս Տապաղյանը և այլ մտավորականներ, որոնք շրջելով Հայաստանի բազմաթիվ վայրեր, գրի առան մոտ 1000 հայ ժողովրդական հեքիաթ, որոնք պահպանվում են Հայկական ՍՍՀ ԳԱՀԱԻ բանահյուսության արխիվում և կազմում են նրա ոսկե ֆոնդը:

Ալաշկերտի բաժնում գտնված բոլոր նյութերը, որոնք Լալայանի ֆոնդի մեջ են մտնում, գրի է առել բանահավաք Նազարեթ Մարտիրոսյանը բացառապես Ալաշկերտի Գարաքիլիսե գյուղացիներից:

Սույն բաժնի անտիպ նյութերի մի մասն էլ վերցված է բանագետ-բանահավաք Ա. Ղանալանյանի և ազգագրագետ-բանահավաք Վարդ Բդոյանի բա-

նահյուսական արխիվում պահպանված նյութերից (մանրամասնությունները տե՛ս առանձին հեքիաթների ծանոթագրության մեջ)։

«Էմինյան ազգագրական ժողովածուի» երկրորդ հատորը լույս է տեսել 1901 թվականին (Մոսկվա—Վաղարշապատ)։ Այս հատորում զետեղված են Ս. Հայկունու հավաքած բազմաթիվ ժողովրդական հեքիաթներ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից, որոնց թվում և Ալաշկերտի գավառից շորս հեքիաթ։

Ներկա հատորի հաշորդ բաժնի նյութերը կազմում են Մանաղկերտի գավառի հեքիաթները թվով 22, որից 16-ը անտիպ են, հրատարակվում են առաջին անգամ, իսկ 6-ը հրատարակված է Հայկունի «Մարգարիտներ հայ բանահյուսության» Գ գրքում։

Այս բաժնի անտիպ նյութերը ևս վերցված են ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայ ժողովրդական բանահյուսության արխիվի՝ Հայկունի ֆոնդից։ Մանաղկերտի բարբառով եղած հեքիաթները ևս պատկանում են Հայկունի խմբարշավի նյութերին, որոնք զրի են առել Սենեքերիմ Շալճյանը, Արտաշես Բարսեղյանը և Նազարեթ Մարտիրոսյանը 1915 թ. հոկտեմբեր—նոյեմբեր ամիսներին, կոտորածներից ճողոպրած մանաղկերտցիներից։

Այս բաժնի 6 հեքիաթ էլ վերցված են Վ. Բղոյանի ֆոնդից, նյութերը պահպանվում են ԳԱՀԱԻ բանահյուսության արխիվում (տե՛ս Վ. Բղոյանի ֆոնդ)։

Սույն ժողովածուի երրորդ բաժինը կազմում են Բաղեշի ժողովրդական հեքիաթները, թվով 25, որից 23-ը անտիպ, երկուսը տպագրված «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում, հավաքել և հրատարակել է Ս. Հայկունին։

Բաղեշի բարբառով եղած հեքիաթները ևս պահպանվում են ԳԱՀԱԻ Հայ ժողովրդական բանահյուսության արխիվում, Հայկունի ֆոնդում, որոնք զրի են առնված Ե. Հայկունի խմբարշավի ժամանակ 1915—16 թթ.։ Հայկունի և բանահավաքների Նազարեթ Մարտիրոսյանի, Արտաշես Բարսեղյանի, Սենեքերիմ Շալճյանի, Մարտիրոս Տապաղյանի կողմից։ Բաղեշի հեքիաթների մեծ մասը, բացառությամբ շորս հեքիաթի, զրի են առնվել Թիֆլիսում, 1916 թ. փետրվարին, իսկ շորսը Մեծ Ղարաքիլիսայում, 1915 թ. հոկտեմբերին։ Անտիպ նյութերից 3-ը վերցված են Վ. Բղոյանի ֆոնդից։

Մանոթությունների մեջ տված են.

1. Ներկա հրատարակության համար հիմք ծառայած աղբյուրների մասին տեղեկություններ (անտիպ և տպագիր լինելու մասին)։

2. Բանահավաքների տված բոլոր տեղեկությունները ու վկայությունները ասացողների մասին, զրառման մանրամասնություններ և այլն։

3. Տվյալ հեքիաթի հրատարակված և վերահրատարակված լինելու մասին։

4. Տվյալ հեքիաթի առնչությունը ներկա հրատարակության նախորդ հատորներում եղածների հետ (ոչ պարտադիր)։

## Ա Լ Ա Շ Կ Ե Ր Տ

### 1. ՍԻՆԱՄԱՀԱՎՔ

(էջ 13)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Դ-ում (էջ 132—151) հրատարակված տեքստի։

Տողատակին Ս. Հայկունին գրում է՝ «Գրի է առած Իսրայել Միրաքյան, իսկ ես կարգի դրած եմ և սխալներն ուղղած»:

Հեքիաթի վերնադրի տակ, փակագծում գրված է՝ «Ալաշկերտի Խաստուր գյուղի բարբառով»:

Այս հեքիաթի վերջին մասը հար և նման է ներկա հրատարակության IV Բաժնի տրոմ հղած «Ռանչպարի տղեն» (№ 10) հեքիաթին»:

## 2. ԱՎՃՈՒ ՏՂՆԵ

(էջ 35)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԽ՝ Բանահյուսական արխիվում (տե՛ս Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 835):

Հեքիաթի վերնագրի կողքին գրված է՝ Ալաշկերտ: Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 15-ին, Երևանում:

Ձեռագրի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց զարաթիլիսեցի Երվանդ Վ. Թաշյան, 23-ամյա կիսագրագետ, զբաղում՝ առևտուր, առաջին անգամն է, որ նահանջի պատճառով դուրս կելնե իր հայրենիքեն»:

## 3. ՇԱՀ — ՄԱՅՄՈՒՆ

(էջ 45)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԽ՝ Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 827): Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Վերևում գրված է՝ «Ալաշկերտ—Գարաթիլիսե»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը 1916 թ. 20-ը հունվարի, Երևանում: Բանահավաքը տողատակին ունի հետևյալ ծանոթությունը՝ «Պատմեց Արսեն Հակոբյան, 23-ամյա, անգրագետ, զբաղվում է ռանչպարությամբ, Կովկաս եկեր է այս նահանջին»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

## 4. ԹՈՒՐ ՈՒ ԹԱՄՓ

(էջ 53)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԽ՝ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ա. Ղանալանյանի՝ Աշտարակ—Վեգի կատարած արշավախմբի նյութերից № 4—5 տետրը):

1 Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորի արխիվ:

Գրի է առել Ա. Ղանալանյանը 1933 թվ. Աշտարակ—Վեգի կատարած խմբար-  
ջավի ժամանակ, խմբարշավի տետրերի վրա գրված է «Մուշ—Ալաշկերտ»:  
Գրառման այլ հանգամանքների մասին ոչինչ չի հաղորդում:

#### 5. ԽՈՐԹ ԱԽԺԻԿՆ ՈՒ ՀԱԼԱԼ ԱԽԺԻԿՆ

(էջ 61)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
քանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 836):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը 1915 թ. դեկտեմբերի 13-ին, Երևա-  
նում:

Էջատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց տիկ. Մ... Վար-  
դան Տաշճյան, 60-ամյա, անգրագետ, ծնած Ալաշկերտ: Բազեշ հարսնութեն ըրած է  
15 տարի, հետո դարձյալ եկեր հաստատվեր է Ալաշկերտ: Կովկաս եկեր է այս  
նահանջին»:

Ձեռագրի վրա կան կարմիր թանաքով ուղղումներ՝ բարբառային և ուղղա-  
գրական կարգի:

#### 6. ԼՈՒՍԵՐԵՍԻԿ

(էջ 65)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
քանահյուսական արխիվում (տե՛ս, Ա. Ղանալանյանի ֆոնդ, տետր 3—4): Գրի է  
առել Ա. Ղանալանյանը 1933 թ. Աշտարակ և Վեգի կատարած խմբարշավի ժա-  
մանակ:

Գրառման հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Խմբարշավի առաջին տետրի վրա գրված է՝ «Մուշ—Ալաշկերտ»:

#### 7. ՎԻՇԱՊ ԵՎ ՎԱԹԱՆ ՈՒ ԲԱԹԱՆ

(էջ 70)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Դ-ում (էջ  
152—158) հրատարակված տեքստի: Գրի է առել Ս. Հայկունին: Առաջողի մասին  
ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Տողատակին գրում է՝ «Սույն հեքիաթն ընդհանրապես ճուհան շահ (տիեզե-  
րակալ) անունով կաւ վի ժողովրդյան մեշ, նաև Ղալայի կյահվար, իսկ Վաթան ու  
Բաթան ևս Շոթո ու Բոթո»:

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառով»:

Հեքիաթը հիշեցնում է ներկա հրատարակության IV հատորում եղած «Միսոս»  
հեքիաթը:

### 8. ԱՎՁԻ ՄԱՆՈՒԿ

(էջ 78)

Տպագրվում է ըստ Ե. Լալայանի «Ազգագրական Հանգես»-ի 19-րդ գրքում՝ (1910 թ. էջ 151—157) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ե. Լալայանը: Տողատակին գրում է. «Պատմեց Ապարանի Ղա-րաքիլիսա գյուղում նույն գյուղացի Սարո Արեշատյան, հիսունամյա, անգրագետ ծերունին, 1909 թ. նոյեմբերի 11-ին: Սրա հայրը գաղթել է այստեղ Ալաշկերտի Քոռու Մուսուն գյուղից: Սարոն այժմ պարապում է երկրագործությամբ և ձմեռ-ները օղաներում հեքիաթ է ասում»:

### 9. ԱՐՄԵՆ ԻՇԽԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 86)

Տպագրվում է ըստ Ե. Լալայանի «Մարգարիտներ հայ բանահյուսության» ժողովածուում (Գ դիրք, էջ 137—141) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ե. Լալայանը: Վերնագրի տակ փաշագծում գրված է՝ «Բազար-շուղ, ալաշկերտցիներ»:

Տողատակին Լալայանը գրում է՝ «Պատմեց 1912 թ. հունիսի 12-ին Բազար-շուղ գյուղում, նույն Բարսեղ Սահակյանը, որ շատ տարիներ Երևանում և Աշտա-րակում մշակություն է արել»:

Բարսեղ Սահակյանի մասին, բանահավաքը նույն գրքում տպագրված «Սե-նեքերիմ Թագավոր» հեքիաթի տողատակին տալիս է մի քանի տեղեկություններ՝ «...Բարսեղ Սահակյան, հիսնամյա անգրագետ ծերունին, չրի ծնողները գաղթե-ին Ալաշկերտի Համսկանա գյուղից... Այժմ Բարսեղը երկրագործությամբ է պա-րապում և ձմեռները հաճախ հեքիաթներ է ասում թե՛ այս և թե՛ ուրիշներ»:

Այս հեքիաթը առնչվում է IV հատորում եղած «Հյումմեհի խորախ» հեքիաթի հետ (Ն՝ 24):

### 10. ՇԱՄՏԱՆ

(էջ 92)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ՝ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 53):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշտվա կնիքը, նրանից վերև գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիսա»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թ. հունվարի 24-ին, Երևա-նում: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Արսեն Հակոբյան, 23-ամ-յա, անգրագետ, զբաղվում է ռանլբրությամբ, նովկաս մնացեր է քանի՜ տարի»:

### 11. ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԵՆ ՈՒ ՆԱԽԸՆՈՒ ՏՂԵՆ

(էջ 96)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ՝ բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 832):

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թ. հունվարի 22-ին, Երևանում:  
Զեռագրի վրա վերևում գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիս», նույն էջի վրա  
գրված է «Ե. Հալալյանի խմբարշավ» կնիքը:  
Առաջին էջի տողատակին գրված է՝ «Պատմեց Արսեն Հակոբյան, 23-ամյա,  
անգրագետ, զբաղվում է ռանչպարությունով»:  
Ունի կարմիր թանաքով ուղղումներ:

12. ՃՈՒԿՈՆ ԿԱՄ ԳԱՐԵԵԼ ՀՐԻՇՏԱԿԻ  
ՀԵՔԻԱԹ

(էջ 103)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Ա. Ղանալանյանի ֆոնդ, տետր № 4):

Գրի է առել Ա. Ղանալանյանը 1933 թ., Աշտարակ—Վեդի խմբարշավի ժամա-  
նակ: Խմբարշավի տետրի վրա գրված է՝ «Մուշ—Ալաշկերտ»:

Գրառման հանգամանքների մասին ոչ մի այլ տեղեկություն չի հաղորդում  
բանահավաքը:

13. ՀՈՐՈՐԴԻՆ ՈՐՐՆ Է

(էջ 108)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Դ հատորում (էջ  
161—165) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ս. Հայկունին. տողատակին գրել է՝ «Պատմած է Փյուզանդ Թո-  
րոսյան, այժմ ուսանող Գ. Ընթարանում»:

Գրառման հանգամանքների մասին այլ մանրամասնություններ չի հիշա-  
տակում:

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառով»:

14. ՄԵՌԵԼԻ ՈՒԼԻՆՔ

(էջ 114)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է  
ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Հալալյանի ֆոնդ, գործ 1,  
ձեռ. № 829): Զեռագրի վերևում գրված է «Ալաշկերտ—Գարաքիլիս», նույն էջի վրա  
գրված է «Ե. Հալալյանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 30-ին, Երևա-  
նում: Տողատակին գրում է՝ «Պատմեց Հայկ Թաշճյան, 22-ամյա, կիսագրագետ,  
զբաղմունք՝ դերձակություն: Կովկաս եկել է այս նահանջին»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան: Տեքստում կան կարմիր թանա-  
քով կատարված բարբառային և ուղղագրական ուղղումներ:

#### 15. ՏՈՒՆ ՇԻՆՈՂ, ՏՈՒՆ ԱՎՐՈՂ ԿՆԻԿՆ Ա

(էջ 119)

Տպագրվում է ըստ «էմինյան ազգագրական ժողովածուի» Դ հատորում (էջ 166—169) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ս. Հայկունին: Ասացողի ու գրառման այլ հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Վերնագրից անմիջապես հետո, շակերտների մեջ առած ունի երկրորդ վերնագիրը՝ «Իրիկ գրսի պատ ա, կնիկ ներսի պատա. սրանից ներքե գրված է՝ «Ալաշ-կերտի բարբառով»:

#### 16. ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆՈՑ ԱՄՈԹԱՆՔԸ

(էջ 124)

Տպագրվում է ըստ «էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Դ-ում (էջ 126—131) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ս. Հայկունին, ասացողի մասին ոչ մի կենսագրական տեղեկություն չի տալիս, տողատակին գրում է՝ «Պատմած է Պողոս Հարթենյան»:

Վերնագրի տակ, իսկադեղում գրված է՝ «Ալաշկերտու խաստուր գյուղի բարբառով»:

#### 17. ՆԱԽՐՃԻՆ ՈՒ ԹԱՔԱՎՈՐԻ ԱԽՁԻԿԸ

(էջ 130)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Վ. Բզոյանի ֆոնդ, «Ճուղկորը Բողոնովկայի ջրջանում», գործուման 7-րդ տետրը, էջ 18—20):

Գրի է առել Վարդ Բզոյանը, 1947 թ. հուլիսին, Բողոնովկայի (նախկին Ախալթալաք) ջրջանի Թորյա գյուղում:

Ասել է Պողոս Գալոյանը, որի մասին բանահավաքը «Պատմիչների կյանքը» բաժնում գրում է՝ «Պողոս Գալոյան, ծնվ. 1910-ին, Թորյայում: Զբաղվել է երկրագործությամբ: Այժմ աշխատում է կոլխոզում որպես պահեստապետ: Կիսագրագետ է: Պողոսի հայրը՝ աջուղ Հովհաննեսը Ախալթալաքի գավառը ջրջող գուսաններից էր նախախորհրդային շրջանում: Ասելու շնորհքը Պողոսի մոտ մասամբ անցել է հորից: Նա անչափ առակներ ու հեքիաթներ գիտե, որոնցից մի քանիսը գրի առա այն օրերին, երբ նա կոլխոզում խիստ զբաղված էր: Իմացած առակների ու հեքիաթների մյուս մասը նա լսել ու սովորել է համագյուղացիներից և ջրջող ասացողներից»:

#### 18. ՎԱԽԿՈՏ ԻՐԻԿ

(էջ 134)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ծրվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ.

№ 828)։ Զեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերևում  
գրված է՝ «Ալաշկերտ»։

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. 29 դեկտեմբերի, Երևա-  
նում։

Տողատակին գրում է՝ «Պատմեց տիկին Նանուխաս Աղեկյան, 30-ամյա, ան-  
գրագետ, Կովկաս եկեր է այս գաղթին»։

Հեքիաթը հիշեցնում է «Քաջ Նաղար»-ի հանրահայտ սյուժեն։

## 19. ՏԸՌԱԼ ԱԽՊԵՐՆ

(էջ 138)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 833)։  
Զեռագրի վրա վերևից գրված է՝ «Ալաշկերտ—Գարաբաղի խառնուրդ», նույն էջի  
վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 28-ին, Երևա-  
նում։

Առաջին էջի տողատակին գրում է՝ «Պատմեց Բյուզանդ Տաշճյան, 20-ամյա  
կիսագրագետ, առաջին անգամն է, որ ընդհանուր նահանջի պատճառով դուրս  
կելնե իր հայրենիքեն»։

Գրառման վերաբերյալ այլ տեղեկություններ չի հաղորդում բանահավաքը։  
Տեքստում կան բանահավաքի կողմից կատարված ուղղումներ։

## 20. ԼԱԿԼԸԿՈՒ ԶԸԳԵՐՆ ՈՒ ՈՒՐԱՆՑ ԽՈՐԹ ՄԵՐ

(էջ 143)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 826)։  
Զեռագիրը մտնում է Երվանդ Լալայանի խմբարշավի նյութերի մեջ։

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. 28 դեկտեմբերի, Երևա-  
նում։

Նշատակին բանահավաքը գրում է. «Պատմեց Հայկ Թաշճյան, 22-ամյա, ար-  
հեստ՝ դերձակություն, առաջին անգամն է, որ դուրս կելնե իր հայրենիքեն, ընդ-  
հանուր նահանջի պատճառով»։

## 21. ՄԱՐԳՈՒ ԱՂԵԿ ՈՒ ՎԱՏ ԳԻՏՑՈՂ ՏՂԵՆ

(էջ 146)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 18)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավն Կնիքը, Դեպի աշ, վերևում գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիս»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 16-ին, Երևանում, Ասեղ է տիկ. Մ. Վարդանյանը:

Ասացողի մասին ոչ մի կենսագրական տեղեկություն չի տալիս: Կան կարմիր թանաքով կատարված ուղղումներ:

## 22. ԱՐԴԱՐԱԴԱՏ ԼԱԼԵՆ

(էջ 148)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ա. Ղանալանյանի ֆոնդ, Աշտարակի և Վեդու խմբարշավ, № 5 տետր, կարմիր թանաքով գրված «5»):

Գրի է առել Ա. Ղանալանյանը 1933 թ.: Տետրի վրա գրված է՝ «Մուշ—Ալաշկերտ»:

Պատմել է Միսակ Պետրոսյանը:

Գրառման հանգամանքների մասին բանահավաքը ոչ մի այլ տեղեկություն չի հաղորդում:

## 23. ԽԱՏԻՍԸՋ ՄՈՒՅԹԻՍԸՋ ՏԱՂԼԱՐ ԵՎ ՇԱՀԱՐԻ ՎԱՐ, ՇԱՐԻԱԹԻ ՅՈՒ

(էջ 151)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 824): Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավն Կնիքը, և ամփոփված է Լալայանի խմբարշավի նյութերի մեջ»:

Գրի է առել 1915 թվականի դեկտեմբերի 14-ին, Երևանում, Նազարեթ Մարտիրոսյանը, որը սողատակում ունի հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Բյուզանդ Վարդանյան Տաջյան, 20-ամյա, կիսագրագետ, առաջին անգամն է, որ դուրս կելնե իր հայրենիքեն»:

## 24. ՏԱՎԱՄ, ՏԱՎԱՄ, ՏԱՎԱՄ

(էջ 154)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 830): Ձեռագրի վերևում գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիս»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 29-ին, Երևանում:

Տողատակին գրում է՝ «Պատմեց Հայկ Բաշյան, 22-ամյա, արհեստ՝ դերձակություն, Կովկաս եկեր է այս նահանջին»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

25. ԷՐԿՈՒ ՉԱՐՉԻՔ

(էջ 158)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 54):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Վերևում գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիս»:

Գրի է առել նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թ. հունվարի 24-ին, Երևանում, Տոգատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Արսեն Հակոբյան»:

Ձեռագիրն ունի կարմիր թանաքով կատարված բարբառային ուղղումներ: Հիշեցնում է ներկա հատորում եղած «Բազեշ» բաժնի «Մարտն ու նամարտ» (№ 74) հեքիաթը:

26. ԷՐԿՈՒ ՀՂԵԿԵՐ

(էջ 161)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 59):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Կողքին, դեպի աջ գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիս»:

Գրի է առել նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թ. հունվարի 20-ին, Երևանում: Ասել է Շաքրո Մանուկյանը: Ասացողի մասին ոչ մի կենսագրական տեղեկություն չի տալիս:

Կան կարմիր թանաքով կատարված ուղղումներ:

27. ՏԵՐՏԵՐ ՈՒ ԱՃԱՄ ԱՂԲԵՐ

(էջ 163)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Բ-ում (էջ 245—247) հրատարակված տեքստի: Գրի է առել Ս. Հայկունին: Ասացողի մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառով»: Իսկ սրանից մեկ տող ներքև շակերտների մեջ երկրորդ վերնագիրն է գրված՝ «Դունյեն իտըմա չը մնա»:

Գրառման ալլ հանգամանքներ չի նշվում:

28. ԻԾՈՒ ՏԵՐ

(էջ 166)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 834): Ձեռագրի վրա գրված է՝ «Ալաշկերտ»: Վերևում գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 10-ին, Երևանում:

Տողատակին ունի հետևյալ ժանոթությունը՝ «Պատմեց տիկ. Մ. Վարդան-Քաշկյան, 60-ամյա, ծնած Ալաշկերտ, 15 տարի ապրել է Բազն կեսրանց տուն, հետո վերադարձեր Ալաշկերտ ու հոն մնացեր մինչև այս նահանջին: Զավակներն ուր աղջիկներն էին, որ կրեբերին իր լեզվի՝ Բաղշո բարբառի ազդեցություն»:

Գրառման հանգամանքների մասին այլ տեղեկություններ չկան:

## 29. ՍԵՎ ԷԶԱՆ ՏԵՐ

(էջ 171)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 60):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Նրանից վերև, դեպի աջ գրված է՝ «Ալաշկերտ—Գարագիլիս»:

Ասել է տիկին Եպրաքսյա Շաքրոյան, 1915 թ. դեկտեմբերի 16-ին, Երևանում: Շրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը:

Կան կարմիր թանաքով կատարված ուղղումներ:

Թուրքերեն խաղը հետևյալն է՝

Խարա օքուղըն ստրուբարի,  
Զաք գորալի կլալ յուխարի,  
Ալթունգան դըր սանըն յարի:

## 30. ԱՌՋ ՓԵՍԵՆ

(էջ 173)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 823): Ձեռագիրը մտնում է Ե. Լալայանի խմբարշավի նյութերի մեջ: Առաջին էջում գրված է՝ «Ալաշկերտ—Գարագիլիս»: Գրի է առել 1915 թ. դեկտեմբերի 13-ին, Երևանում՝ Նազարեթ Մարտիրոսյանը: Տողատակին գրված է՝ «Պատմեց տիկին Մ. ... Վարդան Տաշկյան, 60-ամյա, ծնած Ալաշկերտ, բայց 15 տարի մնացեր Բաղնշ, Կովկաս եկեր է այս նահանջին»:

Գրառման վերաբերյալ այլ մանրամասնություններ չի նշված:

Տեքստում կան կարմիր թանաքով կատարված բարբառային, քերականական և ուղղագրական ուղղումներ ու ճշտումներ:

## 31. ԻՐԵՔ ՔՈՍԱ ՈՒ ՏՈՒՆ ԱՎԻՐՈՂ ՂԱՐՈՆ

(էջ 176)

Տպագրվում է ըստ «էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Բ-ում (էջ 337—342) հրատարակված տեքստի: Գրի է առել Ս. Հայկունին, որը տողատակի

ծանոթության մեջ գրում է՝ «Ասած է Քերոբ (Գիսակ) Նալպանտյան, զրի առած եմ ասողի օգնությամբ, նաև Պ. Գ. Գաբրիելյան ըստ կարելության աշխատած է քնական հնչման վերափոխել, որով Ալաշկերտի բարբառի ճշգրիտ հնչման մը նմուշն է»:

Հեթիաթի վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառով»:

### 32. ՓԸՇԿՈ — ՆԸՌՆՈ

(էջ 183)

Տպագրվում է ըստ «էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Բ-ում (էջ 348—353) հրատարակված տեքստի, Գրի է առել Ս. Հայկունին: Ասացողի մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Այս հեթիաթի երկրորդ մասը հիշեցնում է Հովհ. Թումանյանի՝ «Կացին ախպերը»:

Ժողովածուում վերնագրից հետո, փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառով»:

### 33. ՃՈՐՏՈ — ԲՈՐՏՈ

(էջ 190)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱՆԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 825): Ձեռագրի առաջին էջի վրա վերևում գրված է՝ «Ալաշկերտ—Գարաթիխ», մի քիչ ներքև գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 14-ին: Ունի կարմիր թանաքով ուղղումներ: Բանահավաքը տողատակին գրում է՝ «Պատմեց Բյուզանդ վարզան—Թաշճյան, 20-ամյա, կիսագրագետ, իր հայրենիքեն դուրս ելել է այս նահանջին»:

Ձեռագրի տեքստն ունի կարմիր թանաքով ուղղումներ:

### 34. ՄԵՌԵԼԻՆ ԲԱՆ ՏԱՆՈՂ ՄԱՐԴ

(էջ 193)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱՆԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 55):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը, վերևում, կողքից գրված է՝ «Ալաշկերտ—Գարաթիխ»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թ. հունվարի 21-ին, Երևանում:

Պատմել է Երվանդ Տաշճյանը:

Գրառման մանրամասնություններ կամ ասացողի վերաբերյալ կենսագրական տեղեկություններ չի տրված:

Կան կարմիր թանաքով կատարված ուղղումներ:

35. ԵՈՒՌ ՊԱՌԱՎ

(էջ 195)

Տպագրվում է ըստ «էմիսյան ազգագրական ժողովածուի» Դ հատորում (էջ 172—173) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ս. Հայկունին: Ասացողի և գրաման հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառում»:

36. ԸՌԵՍ ԶԿՌՆԱ ԵՌՈՒ ՄԱԼ ՈՒՏԱ

(էջ 197)

Տպագրվում է ըստ «էմիսյան ազգագրական ժողովածուի» Դ հատորում (էջ 170—171) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ս. Հայկունին. ասացողի մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառում»:

37. ԱՏՄԱՆ ՀՈՐԹԻԶ

(էջ 200)

Տպագրվում է առաջին անգամ: Գրաման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 837):

Ձեռագրի վրա առաջին էջում գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիս»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թվականի դեկտեմբերի 14-ին, Երևանում:

էջատակին, ժանթության մեջ գրում է՝ «Պատմեց տիկ. Նանուխաս Աղեկյան, 35-ամյա, անգրագետ, Կովկաս եկեր է այս անգամ, պանդխտության եղած լէս»:

38. ՃՆՃՂՈՒ ՕՏԱՑ ՓՈՒՇ

(էջ 203)

Տպագրվում է առաջին անգամ: Գրաման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 822): Ձեռագիրը մտնում է Ե. Լալայանի խմբարշավի նյութերի մեջ: Ձեռագրի վրա առաջին էջում գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիս»: Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 14-ին, Երևանում: Տողատակին գրված է՝ «Պատմեց Երվանդ Վարդան Տաջյան, 28 ամյա, կիսագրագետ, զբաղվում է խանութպանությամբ: Առաջին պանդխտությունն է հայրենիքեն դուրս: Կովկաս եկեր է այս անգամ»:

Ձեռագրի վրա կան զրի առնողի կողմից կարմիր թանաքով կատարված քերականական և ուղղագրական կարգի ուղղումներ:

## Մ Ա Ն Ա Ջ Կ Ե Ր Տ

39. ԴՅՈՒՐԳՅԱՐ ՕՂԼԻ

(էջ 206)

Տպագրվում է ըստ Ե. Հալայանի «Մարգարիտներ»-ի Գ գրքում (էջ 61—75) հրատարակված տեքստի:

Վերնագրի տակ, փակագծում գրված է «Ղաղնաֆար, մանաղկերտցիներ»:

Էջատակին գրված է՝ «Պատմեց 1912 թ. հուլիսի 15-ին, Ղաղնաֆար գյուղում, Նիկողայոս Պետրոսյան, հիսունամյա, անգրագետ ժերունին, որի պապերը եկել են Մանաղկերտի Հասան-Փաշա գյուղից: Սա ամառը պարապում է երկրագործությամբ, աշունը գնում է Երևան մշակութային, իսկ ձմեռները շատ անգամ օգաններում հեքիաթ է ասում»:

## 40. ԱՆՆՄԱՆ ՄՈՒՔԱՅԵԼ

(էջ 223)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Հալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 791):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Հալայանի խմբարչավձ կնիքը: Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Մանաղկերտ»:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը:

Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց Աղեքսանդրապոլում, 1915 թվ. հոկտեմբերի 23-ին, Սոֆի Մխոյան-Ասպատուրյան, 30 տարեկան անգրագետ կին: Բնիկ մանաղկերտցի է, բայց շատ ժամանակ Մուշի դաշտի ծրոնք գյուղի մեջ ապրած է»:

## 41. ՕՁ-ՄԱՆՈՒԿ, ՎԱՐԹ-ՄԱՆՈՒԿ

(էջ 231)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Հալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 794):

Ձեռագրի վրա, վերևում գրված է «Ե. Հալայանի խմբարչավձ կնիքը: Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Մանաղկերտ»:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը, որը տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Աղեքսանդրապոլում, 1915 թ. հոկտեմբերի 27-ին, մանաղկերտցի տիկին Սոֆի Մխոյան, 30 տարեկան անգրագետ կին: Երկար ժամանակ ապրած է Մշո ծրոնք գյուղի մեջ»:

## 42. ՏԳՈՒՄ ԱՂՋԻԿ

(էջ 238)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Հալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 795):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Հալայանի խմբարչավձ կնիքը»:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը, 1915 թ. հոկտեմբերի 21-ին, Ալեքսանդրապոլում. «Ասեւ է Սոֆո Մխոյանը, 30 տարեկան անգրագետ կին: Բնիկ Մանազկերտցի է, բայց շատ ժամանակ Մուշի դաշտի Յրոնք գյուղի մեջ ապրած է», գրում է տողատակի ծանոթության մեջ բանահավաքը:

#### 43. ՀԱՐՐՄԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 244)

Տպագրվում է ըստ Ե. Հալայանի «Մարգարիտներ»-ի Գ գրքում (էջ 82—89) հրատարակված տեքստի:

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ղազնաֆար—մանազկերտցիներ»:

էջատակին գրված է՝ «Պատմեց 1912 թ. հուլիսի 16-ին, Ղազնաֆար գյուղում. նույն նիկողայոս Պետրոսյանը»:

Նիկողայոս Պետրոսյանի մասին տե՛ս ներկա ժողովածուի՝ «Դուրգյար-օղ-լի» (Ն՝ 39) հեքիաթի ծանոթագրությունը:

#### 44. Ք Ը Լ Ի

(էջ 253)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱՆՐԱՆահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Հալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 793):

Ձեռագրի վրա դրված է «Ե. Հալայանի խմբարշավ» կնիքը: Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Մանազկերտ»:

Տողատակին գրված է՝ «Պատմեց Ալեքսանդրապոլում 1915 թվ. նոյեմբերի 6-ին, Սոֆո Մխոյան, 33 տարեկան, մանազկերտցի կին»:

Նախորդ ձեռագրերում նույն ասացողի տարիքը գրված է 30, հավանաբար այստեղ սխալվել է բանահավաքը, քանի որ մի քանի ձեռագրերում գրված է 30 տարեկան:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը:

#### 45. ՄԱՐԴԱԿԵՐ ԴԱՐՎԻՇ

(էջ 258)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱՆՐԱՆահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Հալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 798):

Ձեռագրի վերևի մասում գրված է՝ «Մանազկերտ—Բերդ»:

Նրանից մի փոքր ներքև դրված է «Ե. Հալայանի խմբարշավ» կնիքը:

Վերնագրից առաջ գրված է՝ «Հեքիաթ», ապա ներքևում վերնագիրը՝ «Մարդակեր դարվիշ»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. նոյեմբերի 6-ին, Ալեքսանդրապոլում: Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց Անգին Աբաղյան, 18-ամյա. օրիորդ, անգրագետ, զբաղում՝ տնական աշխատությամբ: Առաջին անգամն է, որ դուրս կհանի իր հայրենիքեն»:

46. ԱՆԻԿ, ՐԱԼԱԴԵ ԿՈՒՁՆՆ

(էջ 266)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 796):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավա կնիքը: Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Մանազկերտ»:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը, 1915 թվ. հոկտեմբերի 31-ին, Ալեքսանդրապոլում: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց մանազկերտցի Սոֆո Մխոյան, 30-ամյա անգրագետ կին. Երկար ժամանակ ապրել է Ռուստամզե-դուկ, Մշու ծրոնք գյուղերի մեջ»:

Ձեռագրի առաջին երեսին (շապկի վրա) վերնագիրը գրված է միայն «Աննիկ», իսկ բուն տեքստից առաջ՝ «Անիկ, Բալագե Կուզեն», մենք նախընտրեցինք թողնել վերջին վերնագիրը:

47. ՀՈՒՆԱՆ ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՍԵԴՐԱԿ-ՄԻՍԱԿ

(էջ 271)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 799):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավա կնիքը: Վերևում գրված է՝ «Մանազկերտ—Մալալ»:

Գրի է առել Արտաշես Բարսեղյանը, 1915 թ. հոկտեմբերի 20-ին, Ալեքսանդրապոլում: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Գասպար Մուխսի Ժրանոսյան, Մանազկերտի Մալա-մսթաֆա գյուղացի, 33 տարեկան, անգրագետ, երկրագործ: Հեքիաթները սովորել է իրենց գյուղի սաքուններում՝ ծերերից: Միայն վեց ամիս Կարսն է պանդխտած»:

48. ԽԵԼՔԸ ՇԱՏ

(էջ 281)

Տպագրվում է ըստ Ե. Լալայանի «Մարգարիտներ»-ի Գ գրքում (էջ 90—97) հրատարակված տեքստի:

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ղազնաֆար, մանաղկերտցիներ»:

էջատակին գրված է՝ «Պատմեց 1912 թ. հուլիսի 15-ին, Ղազնաֆար գյուղացի, նույն Նիկողայոս Պետրոսյանը»:

Ասացողի մասին տե՛ս «Դուրգյար օղլին» հեքիաթի (№ 39) ծանոթագրությունը:

49. ՆԱՃՐԻ ԿՆԻԿ

(էջ 289)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 806):

Ձեռագրի վրա գրված է՝ «Ե. Լալայանի խմբարշտված կնիքը: Նրանից վերև՝ գրված է՝ «Մանադկերտ — Բերդ»:

Գրի է առել նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թվ. նոյեմբերի 2-ին, Ալեքսանդրապոլում:

Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց Հարություն Մկրտչյան, 35-ամյա, զբաղում՝ երկրագործություն: Իր երկրեն առաջին անգամն է, որ դուրս կելնե»:

#### 50. ԽՈՃԱ ԱԼԻ

(էջ 296)

Տպագրվում է ըստ Ե. Լալայանի՝ «Մարգարիտներ»-ի Գ հատորում (էջ 102—108) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ե. Լալայանը: Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Ղազնաֆար, մանազկերտցիներ»:

Տողատակին գրված է՝ «Պատմեց 1912 թվ. հուլիսի 16-ին, Ղազնաֆար գյուղում, նույն նիկողայոս Պետրոսյանը: Պետրոսյանի մասին տե՛ս «Դուրդյաբ» օղևի» (Ճ 39) հեքիաթի ծանոթագրությունը:

Այս հեքիաթը հիշեցնում է ներկա հրատարակության IV հատորում եղած՝ «Ռանչպարի տղեն» և ներկա իններորդ հատորում եղած «Սինամահավք» հեքիաթները:

#### 51. ՋՂՈՒԴՆ ՈՒ ՀԱՅԸ

(էջ 304)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԽ՝ բանահյուսական արխիվում (տե՛ս, Վ. Բդոյանի ֆոնդ, «Ձուլկլորը Ախուրյանի» շրջանում», շորրորդ-հինգերորդ գործուղում, էջ 55—60):

Գրի է առել Վարդ Բդոյանը, 1946 թվ. հունվար-փետրվարին, Ախուրյանի շրջանի Մուլլամուսա (այժմ Ոսկեհասկ) գյուղում: Ասել է Հրաչյա Մնացյանը: Անացողի մասին բանահավաքը գրում է՝ «Հրաչյա Մնացյան, ծնվել է 1909 թվ. հունիսի Բուռնաղ գյուղում, բարբառը հեռուսինն է, խառնված Մուլլամուսայի միջարք բարբառների հետ» (էջ 107):

#### 52. ԹԱՔԱՎՈՐԻ ԱԽՁԻԿ

(էջ 310)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԽ՝ բանահյուսական արխիվում (տե՛ս, Վ. Բդոյանի ֆոնդ, «Ձուլկլորը Ախուրյանի» շրջանում», գործուղում շորրորդ-հինգերորդ, տետր էջ 68—72):

Գրի է առել Վ. Բդոյանը, 1946 թ. հունվար-փետրվարին, Ղարիբջանյան գյուղում:

Ասել է Հարություն Հարությունյանը, Հարությունյանի մասին տե՛ս, «Վախկոս» մարթը» հեքիաթի ծանոթագրությունը:

### 53. ԱՍՏԵՈՒ ՓՂՈՐՄՈՒԹԵՆ

(էջ 315)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱՆՔԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՄ (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 792): Ձեռագրի վրա գրված է՝ «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Մանազկերտ»:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Աղեքսանդրապոլում, 1915 թվ. հոկտեմբերի 27-ին, մանազկերտցի տ. Սոֆո Մխոյան, 30 տարեկան, անզրագետ կին: Երկար ժամանակ ապրած է Մուշի դաշտի ծրոնք գյուղի մեջ»:

Այս հեքիաթը հիշեցնում է ներկա հրատարակության IV հատորի «Բախտավոր աղա» (№ 14) հեքիաթը:

### 54. ԽՈՋԱ ԹՈՒՄԱՍ

(էջ 321)

Տպագրվում է ըստ Ե. Լալայանի «Մարգարիտներ»-ի Գ հատորում (էջ 76—81) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ե. Լալայանը: Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ղաղնաֆար, մանազկերտցիներ»:

Տողատակին բանահավաքը գրում է՝ «Պատմեց 1912 թ. հուլիսի 16-ին, Ղաղնաֆար գյուղում, նույն նիկողայոս Պետրոսյանը: Պետրոսյանի մասին տե՛ս «Դյուրգար օղլի» հեքիաթի ծանոթագրությունը:

Այս հեքիաթը հանդիսանում է ներկա ժողովածուի «Բաղեշ» բաժնի «Երեք գողեր» (№ 78) հեքիաթի մի տարբերակը:

### 55. ՎԱՆԿՈՏ ՄԱՐԹ

(էջ 327)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱՆՔԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՄ (տե՛ս, Վ. Բդոյանի ֆոնդ, «Յուլիորը Ախուրյանի շրջանում» տետրը, գործուղում չորրորդ-հինգերորդ, էջ 61—65):

Գրի է առել Վարդ Բդոյանը, 1946 թվ. հունվար-փետրվարին, Ղարիբջանյանում:

Ասել է Հարություն Հարությունյանը: Առաջողի մասին նույն տետրի «Կենսագրություններ» բաժնում գրում է՝ «Հարությունյան Հարություն, ծնվել է 1896-ին, Մուշի Վարդենիս գյուղում: Մինչև 1914-ը զբաղվել է հողագործությամբ: Այդ թվին թուրքերի ձեռքով սպանվել է նրա հայրը, իսկ ընտանիքը գաղթել է Արևելահայաստան: Նա նախ բնակություն է հաստատել Ղուկասյանի շրջանի Վարդաղբյուր (Գյուլբերդյաղ) գյուղում մինչև 1918-ը»:

Երկրորդ գաղթին՝ 1918-ին նա գալիս է Ղենիսականի Ալեքսանդրովկա հայաբնակ գյուղը՝ Ըռսի Ղարաքիլիսա, այժմ Ղարիբջանյան, և ապրում մինչև այսօր:

1942-ից մինչև 1945-ը եղել է քանակում: Հարուժյունը գյուղում հայտնի առականոս է «Բոշի Հարթեն» մականվամբ: Նա դավուհի է...» (էջ 104—105):

#### 56. ՀՅՈՒԴԺԱԹԻ ԶԱԼԸՄ ԹԱԳԱՎՈՐԸ

(էջ 332)

Տպագրվում է ըստ Ծ. Հալայանի «Մարգարիտներ»-ի Գ գրքում (էջ 97—101) հրատարակված տեքստի: Գրի է առել Ծ. Հալայանը: Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Ղաղնաֆար, մանադկերտցիներ»:  
էջատակին գրված է՝ «Պատմեց 1912 թ. հունիսի 15-ին, Ղաղնաֆար գյուղում, նույն նիկողայոս Պետրոսյանը»:  
Նիկողայոս Պետրոսյանի մասին տե՛ս «Դյուրգար օղի» հեքիաթի ծանոթագրությունը:

#### 57. ՕՅՆ ՈՒ ՄԱՐԹԸ

(էջ 337)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Վ. Բդոյանի ֆոնդ, «Ֆուլկլորը Բոզգանովկայի շրջանում» տետրը, էջ 24—27):  
Գրի է առել Վարդ Բդոյանը, 1947 թվ., Բոզգանովկայի (նախկին Ախալքալաք) շրջանի Ուլմանա գյուղում:  
Ասել է Մկրտիչ Բումասյանը, որի մասին բանահավաքը տալիս է կենսագրական աղբյուրի տեղեկություններ՝ «Մնվել է Ուլմանայում, 1901-ին, նշանավոր առականոսներից է գյուղի մեջ»:

#### 58. ԻՇՈՒ ԴԵՄ ԽԱՂՑԱՄ ԹԱԳԱՎՈՐԸ

(էջ 340)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Վ. Բդոյանի ֆոնդ, «Ֆուլկլորը Բոզգանովկայի շրջանում» տետրը, էջ 21—22):  
Գրի է առել ազգագրագետ-բանահավաք Վարդ Բդոյանը, 1947 թվ., Բոզգանովկայի շրջանի Ուլմանա գյուղում:  
Ասել է Լևոն Թումասյանը:  
Տետրի վերջում բանահավաքը բերում է ասացողների մասին կենսագրական տվյալներ: Լևոն Թումասյանի մասին գրում է՝ «Մնվել է Ուլմանայում, 1910-ին: Կոլխոզնիկ է: Բավական ժամանակ եղել է քանակում: Լուկ-մնջիկ բնավորություն ունի, բայց հաճախ այնպիսի առականներ է պատմում, որ լսողները ակամայից ծիծաղում են: Այդ ծիծաղն իր վրա չի ազդում, ինքը շփոթաղեղով է ծիծաղեցնում: Գիտե բազմաթիվ առականներ ու հեքիաթներ: Հնարավոր էր նրանից գրի առնել նաև «Ջյուրօղին», բայց կոլխոզի աշխատանքները խանգարեցին»:

## 59. ԽՈՌԽՈՐ ԽԱՆՈՒՄ

(էջ 343)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 797):

Ձեռագրի վրա գրված է՝ «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Վերևում գրված է՝ «Մանադկերտի — Բերդ»:

Վերնագրից առաջ. վերևում գրված է՝ «Հեթիաթ»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թվ. նոյեմբերի 6-ին, Ալեքսանդրապոլում:

Ձեռագրի առաջին էջի տողատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց Անգին Աբաղյան, 18-ամյա օրիորդ, անգրագետ, առաջին պանդխտությունն է իր հայրենիքեն դուրս»:

Նույն ծանոթությունը կրկնվում է վերջին էջի վրա, սակայն այստեղ ասացողը ոչ թե 18, այլ 20-ամյա օրիորդ է, անգրագետ:

## Բ Ա Ղ Ե Շ

## 60. ՆԱՐԴԱՆՈՍ

(էջ 347)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 783):

Ձեռագրի առաջին էջում, վերնագրի կողքին գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը, կողքին գրված է՝ «Բաղեշ»:

Գրի է առել բանահավաք Արտաշես Բարսեղյանը: Տողատակին ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց 1916 թ. փետր. 12-ին, Թիֆլիսում, Ջարջիս Սեդրակյան, 23 տարեկան, գրագետ, Բիթլիսցի երիտասարդը: Հեթիաթները սովորել է Բաղեշ քաղաքի ձերբերից: Երեք տարի մնալով պանդուխտ՝ Սուխում և այլն, լեզուն շատ է փոխվել»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան: Այս հեթիաթը հիշեցնում է «էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում (էջ 321—333) հրատարակված և սույն ժողովածուի № 61՝ «Զվալ Աստղ և Նուանատ ու Օսկեծամա հեթիաթը»:

Սրանք տարբերակներ են, բայց յուրաքանչյուրը ինքնատիպ է:

## 61. ԶՎԱԼ ԱՍՏՂ ԵՎ ՆՌԱՆՀԱՏ ՈՒ ՕՍԿԵԾԱՄ

(էջ 361)

Տպագրվում է ըստ «էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Բ-ում (էջ 321—333) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ս. Հակոբյան, ասացողի մասին ոչ մի տեղեկություն չի տալիս:  
Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Բաղշի բարբառով»:  
Այս հեքիաթը հանդիսանում է սույն ժողովածուի «Նարգանտ» (№ 60) հե-  
քիաթի տարբերակը:

## 62. ՄՈԼԼԻ ԼԱՄՈՒԿՆԵՐ

(էջ 376)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Վ. Բզոյանի ֆոնդ՝ «Ֆուկլորը Ախուրյանի  
շրջանում»՝ գործուղում շորորդ-հինգերորդ տետր, էջ 42—55):

Գրի է առել Վարդ Բզոյանը, 1946 թվ. հունվար-փետրվարին, Ախուրիկ գյու-  
ղում:

Ասել է Հակոբ Մխիթարյանը:

Մխիթարյանի մասին տե՛ս «Զըռթ աֆարեմ» հեքիաթի ծանոթագրության  
մեջ (№ 80):

## 63. ՔԱԶԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՐՍԸ

(էջ 390)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 775):

Ձեռագրի վրա, վերևում քիմիական մատիտով գրված է՝ «Բիթլիս», նրանից  
5 սող ներքև գրված է՝ «Ե. Լալայանի խմբարչավ» կնիքը:

Հեքիաթի տեքստը սկսելուց առաջ փակագծում գրված է՝ «Բիթլիս», որի վե-  
րևում գրված է աստղանիշ և տողատակում՝ ծանոթություն: «Պատմեց 1915 թվ.  
հոկտեմբերի 13-ին, Մեծ-Ղարաքիլիսա գյուղում, Բիթլիս քաղաքից Մուրատ Հակոբ-  
յան, 30-ամյա, անգրագետ մաշկակարը: Մոտ 18 տարի ապրել է Բուլանըխի Կոփ  
գյուղում: Եկել է Կովկաս այս տարին»:

Ձի հիշատակված բանահավաքի անունը, ով է գրի առել, սակայն ձեռագիրը  
Ե. Լալայանինն է, նշանակում է գրի է առել Ե. Լալայանը:

Հեքիաթի վերնագիրը մենք ենք գրել:

## 64. ԹԱՔԱՎՈՐՈՒ ԽԱՐՍ

(էջ 403)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 787):

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Բաղեշ», կողքին գրված է «Ե. Լալա-  
յանի խմբարչավ» կնիքը:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը, Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց Թիֆլիսում, 1916 թ. փետրվարի 12-ին, Բիթլիսցի Խիչնցոնց Լևոն Հակոբյան»:

Հեքիաթի վերջին մասը հիշեցնում է ներկա հրատարակության 4-րդ հատորում հղած «Հաբրմանի» (Ճ 1) հեքիաթը:

65. ՔՈՌՈՒ, ԴԵՐՎԻՇԻ ԵՎ ԳՆՈՒԽ ՔԱՐԵՐ ԶԱՐԿՈՂ ՄԱՐԴՈՒ ԳԱՂՏԵՒՔ

(էջ 409)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 779—780):

Ձեռագրի վրա, վերնագրից վերև գրված է՝ «Հեքիաթ», կողքին, ավելի վերևից գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Նույն էջի վրա գրված է՝ «Բաղեշ»:

Էջատակի ծանոթության մեջ գրված է՝ «Պատմեց Հարեթ Հարդենյան, 26-ամյա, անգրագետ, արհեստ՝ հացագործություն: Պոլիս—Բուլղարիա մնացեր է 3 տարի»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թ. փետրվարի 10-ին, Թիֆլիսում:

66. ԶԱՐԽԻ ՄԵՋ ՆՍՏՈՂ ՏՂԵՆ

(էջ 414)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 785):

Ձեռագրի վերևի մասում գրված է «Հեքիաթ», դրա տակը՝ վերնագիրը՝ «Հեքիաթ»-ից մի քիչ վերև, դեպի աջ գրված է՝ «Բաղեշ»: Ներքևում գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թ. փետրվարի 9-ին, Թիֆլիսում:

Բանահավաքը տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Երվանդ: Գրիգորյան, 20-ամյա, բաղեշցի, կիսագրագետ, արհեստ՝ կոշկակարություն: Կովկաս եկեր է այս նահանջին: Առաջին անգամն է, որ դուրս եկին իր հայրենիքեն, բայց իր գավառի լեզվեն շատ քիչ բան ունենա»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

67. ՆԱԽՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐ

(էջ 424)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 831): Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թ. դեկտեմբերի 28-ին, Երևանում: Տողատակին դրել է՝ «Պատմեց տիկին Եպրաքսյա Շաքրոյան, 20-ամյա, անդրազետ: Կովկաս եկեր է այս նահանջին: Կրած է չոր լեզվի ազդեցություն, այսինքն Ռադեշի բարբառին»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

Տեքստում կան կարմիր թանաքով կատարված մի շարք քերականական ու բարբառային ուղղումներ:

#### 68. ԽԵՂՃ ՄԱՐԴ

(էջ 428)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ րանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 784):

Ձեռագրի առաջին էջի վրա վերնում գրված է «Ե. Լալայանի խմբաբաշխված կնիքը, այնուհետև նրանից մի քիչ վերև, դեպի աջ փակագծում գրված է՝ «Բաղեշ»:

Գրի է առել Արտաշես Բարսեղյանը: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց 1916 թվ. փետրվարի 10-ին, Քիֆլիսում, Երվանդ Գրիգորյան, 20-տարեկան, բնիկ բաղեշցի, քիչ կարգավ դրել գիտեմ»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

#### 69. ԴԱՐՁԻՆ ԵՎ ԻՐԵՔ ՉԱՐԵՔ

(էջ 435)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Բ-ում (էջ 333—336) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ս. Հայկունին: Ասացողի մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բաղշու բարբառով»:

#### 70. ԷՐԿՈՒ ԹԱՔԱՎՈՐԻ ՄԱՍԱԼԵՆ

(էջ 440)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ րանահյուսական արխիվում (տե՛ս, Վ. Բդոյանի ֆոնդ՝ «Ճուլկորը Աշտարակի շրջանում», առաջին գործուղում, էջ 34—37):

Գրի է առել Վարդ Բդոյանը՝ Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում, 1945 թվ. փետրվարին:

Ասել է Մուշեղ Մանուկի Սիմոնյանը, որի մասին բանահավաքը գրում է՝ «Ծնվել է 1886 թվ. Բաղեշի վիլայեթի Բուլանըխի Մաճըթլի գյուղում: Գյուղը (Սուլթանլու), որ հետագայում ապրում էր Մուշեղը, ուներ նաև 4—5 քուրդ ըն-

տանիք, Հայերը կազմում էին 120 տուն, Մոսիկ հարաբերության մեջ լինելով հուլու Հուսեն աղայի ընտանիքի հետ, Մուշեղը սովորում է քրդերեն:

Մուշեղն ունի հորինելու և երգելու շնորհք, Կյանքում միշտ երգել է ու հորինել քրդերեն երգեր: Այսօր էլ, երբ նրա շրջապատը 30 տարուց ավելի ժամանակամիջոցում եղել է զուտ հայկական՝ հորինում է քրդերեն բառով: Մեր հարցին, թե ինչու է այդ այդպես, նա պատասխանում է՝ «էդ լեզվով հեշտ է»: Հորինված երգերը նա երգում է ամենուրեք, ուր որ առիթ է լինում:

Մուշեղը նշանավոր հեթաթասացներից մեկն է Եղվարդում: Նրան հայտնի են քրդական մի շարք վեպեր ու ավանդություններ («Մամե-Աշե», «Խաչե-Սիաբանդ», «Լեյլի-Մեշնուն» և այլն):

Այդ բոլորը նա սովորել է հայրենի գյուղում: Նրանից գրի եմ առել՝ 1. «Խաչե-Սիաբանդ», 2. «Էրկու թագավորի մասալեն» և 3. «Շառե», Բարբառը խառն է:

#### 71. ԶԱԴՈՒՔՅԱՐ ՊԱՌԱՎ

(էջ 444)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 774):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Վերևում գրված է՝ «Բիթլիզ»:

Ձեռագրի առաջին երեսի վրա (շապկի) գրված է՝ «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 13-ին, Կարաքիլիս, Տիգրան Հակոբյան, Բիթլիզի, քսանութ տարեկան, անգրագետ երիտասարդ»:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը:

Հեթաթի բուն տեքստը սկսվելուց առաջ գրված է վերնագիրը, նրա տակ փակագծում գրված է՝ «Բիթլիզ»:

#### 72. Վ Ի Ժ Կ Ր Ա Ր

(էջ 447)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 790):

Ձեռագրի առաջին երեսի վերևի մասում գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Մարտիրոս Տապաղյանը, որը տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Մուրատ Հակոբյան, բաղեջի, անգրագետ, 30 տարեկան, կոշկակար»:

Գրառման այլ մանրամասնություններ չի գրում բանահավաքը:

#### 73. ՔՈՍԻ ԻՐԵՔ ՄԸՇԿԸՆԵՐ

(էջ 452)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 776):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Մարտիրոս Տապաղյանը: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց բաղնիցի Մուրադ Հակոբյան, 30 տարեկան, Կարդալ-գրել չգիտեր: Կոշկա-կար է»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

Այս հեքիաթը հիշեցնում է «Տերն ու ծառան» հանրահայտ հեքիաթը:

#### 74. ՄԱՐՏՆ ՈՒ ՆԱՄԱՐՏ

(էջ 458)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 781): Ձեռագրի վրա առաջին էջում գրված է «Հեքիաթ», ապա դրանից հետո՝ «Մարտն ու Նամարտ», «Հեքիաթ»-ից առաջ, էջի աջ կողմում գրված է՝ «Բաղնից քաղաք»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թ. փետրվարի 10-ին, Թիֆ-լիսում:

Բանահավաքը տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Հարեթ Հար-դենյան, 26-ամյա, կիսագրագետ, արհեստ՝ հացագործություն: Երեք տարի մնացեր է Պոլիս ու Պուկարիա»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

Հիշեցնում է ներկա հատորում եղած «Ալաշկերտ» բաժնի «Էրկու լարչիք» (№ 25) հեքիաթը:

#### 75. ՅՈՒ ԴԵՎԵՐՈՒ ԱՆՊԵՐ

(էջ 465)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 777):

Ձեռագրի առաջին երեսին գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Մարտիրոս Տապաղյանը: Բանահավաքը տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Մուրատ Հակոբյան, բաղնիցի, անգրագետ, 30 տարեկան, կոշկակար»:

Այլ տեղեկություններ չի հիշատակված: Հեքիաթի վերջում՝ «Էրկուց իրևք խնձոր իջավ»-ի մեջ ասացողը հիշատակում է իր որտեղացի լինելը և բանահա-վաքի՝ գրի առնողի մասին տեղեկացնում, որ նա վանեցի է:

Այս հեքիաթը հիշեցնում է ներկա հատորում եղած «Վախկոտ իբրկ» (№ 18) հեքիաթը:

#### 76. ԽԵԼՔՈՎ ԿՆԻԿ

(էջ 469)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 786):

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Բաղնից»: Գրա կողքին դրված է «Ե. Լա-լայանի խմբարշավ» կնիքը: Պատմել է Լևոն Հակոբյանը: Գրի է առել Սենեքերիմ

Շալճյանը, որը տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «1916 թվ. փետրվարի 12-ին, Թիֆլիսում պատմեց Բիթլիսցի երկանցոնց Հակոբու տղեն՝ Լևոն: Իր ծնողք երգանցի, ինքն Բիթլիսում ծնած: Բաթնոցում ապրել է տասնմեկ տարի: Բիթլիսում խոհարար է եղած, և հազիվ մեկ տարին ի վեր Կովկասն անցած է»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

#### 77. ԿՆԳԱՆ ՇԱՌ

(էջ 473)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 788):

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Բաղեշ»: Ձեռագրի վերևում, աջ մասում գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Արտաշես Բարսեղյանը, որը տողատակին գրում է՝ «Պատմեց 1916 թ. փետրվարի 15-ին, Թիֆլիսում նույն Նովանդ Գրիգորյան, 20-տարեկան նրի-տասարդը»:

Գրառման այլ մանրամասնություններ չի հիշատակում:

#### 78. ԻՐԵՔ ԳՈՂԵՐ

(էջ 478)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 789):

Ձեռագրի առաջին երեսին, վերնագրի կողքին գրված է՝ «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Նրանից վերև գրված է՝ «Բաղեշ»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թվ. փետրվարի 9-ին, Թիֆլիսում: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց Երվանդ Գրիգորյան, 20-ամյա, բաղեշցի, կիսագրագետ, արհեստ՝ կոշկակարություն: Կովկաս եկել է, այս նահանջին: Առաջին անգամն է, որ դուրս կելնե իր հայրենիքն: Բաղեշի դավառական լեզուն բնավ չէր կրնար արտահայտել»:

Գրեց Նազարեթ Նազարեթյանը:

Տողատակին գրված «Նազարեթյանը», անշուշտ, վրիպում է:

Այս հեքիաթը հանդիսանում է ներկա ժողովածուի «Մանագեկերտ» բաժնի՝ «Խոնճա Թումաս» (№ 53) հեքիաթի մի տարբերակը:

#### 79. ԿԱՆԱՐԱՆԻՑ ՄԱՐԹ ԿԱԶԱՏԵՄ

(էջ 486)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 773):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առնել Սենեքերիմ Շաւրյանը, որը տողատակի ծանոթության մեջ գրում է՝  
«Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 13-ին, Կարաքիլիսում Տիգրան Հակոբյան. Իիթ-  
լիդցի, քսանութ տարեկան անգրագետ երիտասարդը: Արհեստով կոշկալար»:  
Հեքիաթի վերնագիրն էր՝ «Իրեք գողեր», բայց քանի որ նույն վերնագրով էր  
և նախորդ հեքիաթը՝ վերնագիրը փոխել ենք:

#### 80. ԶԸՌԹ ԱՅԱՐԸՄ

(էջ 489)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Վ. Բզոյանի ֆոնդ՝ «Ֆուկլորը Ախուրյանի  
շրջանում», գործուղում շորորդ-հինգերորդ տետր, էջ 65—68):

Գրի է առնել Վարդ Բզոյանը, 1946 թվ. հունվար-փետրվարին, Ախուրյանի շըր-  
ջանի Ախուրիկ գյուղում:

Ասել է Հակոբ Մխիթարյանը: «Պատմիչների կյանքը» բաժնում Մխիթարյանի  
մասին բանահավաքը գրում է. «Մխիթարյան Հակոբ, ծնվել է 1910-ին, Բաղեշի  
նութի շրջանի Փիչոնք գյուղում: Հինգ տարեկան հասակում, մեծ գաղթի ժամանակ  
մոր հետ գաղթել է Ախուրյանի շրջանի Մեծ Փյափանակ (այժմ Մուսայելյան)  
գյուղը: Երկու տարի այստեղ ապրելուց հետո, 1918-ին երկրորդ անգամ գաղթել է  
Ղարաբաղ, ուր մի քանի տարի ապրելուց հետո, եկել է Լենինական, ընդունվել  
որբանոց: Այստեղից նա դուրս է եկել երեք տարի հետո: 1929-ին Հակոբը գալիս է  
Ախուրյանի շրջանի Ախուրիկ գյուղը: 1942—1943 թթ. եղել է բանակում»:

Հակոբը նշանավոր առակախոս-հեքիաթասաց է:

Գրի առնել մայրենի բարբառով՝ մեղ չհաջողվեց, որովհետև ուրիշների նման  
նա էլ խոսում է խառն բարբառով, (էջ 106):

#### 81. ՔՈՒ ԿԵՆԼՈՒ ԱՍՏՎԱԾ

(էջ 493)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Ս. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 778):

Զեռագրի առաջին երեսին, վերևում դրված է «Ս. Լալայանի խմբարչավ»  
կնիքը:

Տողատակի ծանոթության մեջ գրված է՝ «Պատմեց Տիգրան Հակոբյան, բա-  
ղեշի, 28 տարեկան, անգրագետ, հնակարկատ»:

Գրի առավ՝ Մարտիրոս Տապաղյան, Մեծ Կարաքիլիսե, 14 հոկտ. 1915»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան: Այս հեքիաթը հիշեցնում է «Տը-  
ռալ» հեքիաթը (№ 82):

#### 82. Տ Ը Ռ Ա Լ

(էջ 496)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ  
բանահյուսական արխիվում (տե՛ս, Ս. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 57):

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թվ. դեկտեմբերի 15-ին, ծրեանում:

Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց տիկ. Եպրաք-սյա Շաքրոյան, 20-ամյա, անգրագետ: Հակառակ որ ծնած, ս(նած), մեծացած է: Ալաշկերտի մեջ, կկրե իր մոր լեզվի՝ Բաղշի գավառաբարբառի ազդեցություն: Այս նահանջին է եկեր Կովկասը:

Այս հեքիաթը հիշեցնում է ներկա ժողովածուի «Քոռ կեելու աստված» հեքիաթը. ձեռ. № 778 (Մ 81):

## Հ ա վ ե լ Վ ա ծ 1

### 1 (83). ԱԼԱՐԱԼԸՂ ԶՈՒԿԸ

(էջ 501)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրը»):

Գրի է առել Գրիգոր Կարախանյանը 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Արմեն Հովհաննեսի Կարախանյանը: Ասացողի մասին առանձին թղթի վրա բանահավաքը գրել է՝ «Ասացող՝ անգրագետ, Արմեն Հովհաննեսի Կարախանյան, ծնվել է 1872 թվ. Վրացական ՍՍՀ Ախալքալաքի շրջանի Դիլիսկա գյուղում, ուսնչպար, մինչև վերջերս աշխատում էր կոլխոզում իբրև հնձվոր: Պապերը էրդրումի (Կարին) Գեղախոռ գյուղից:

Հեքիաթը հանդիսանում է ներկա հրատարակության շորրորդ հատորում տպագրված «Մարդակերպ ձուկը» (№ 4) հեքիաթի մի այլ տարբերակը:

### 2 (84). ԸԽՏԱՆՈՍԸ

(էջ 508)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրը»):

Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Արմեն Հովհաննեսի Կարախանյանը, տե՛ս № 83 ծանոթագրությունը: Հեքիաթը հիշեցնում է ներկա հրատարակության շորրորդ հատորում տպագրված «Թանչպարի տղեն» հեքիաթը (№ 10):

### 3 (85). ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

(էջ 511)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրը»):

Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին:

Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս, № 89 ծանոթագրությունը:

4 (86). ԹԱՔԱՎՈՐԻ ՊՋՏԻ ՏՂԵՆ

(էջ 516)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»): Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս № 83 ժանոթագրությունը: Հեքիաթը անվերնագիր էր: Վերնագիրը գրված է մեր կողմից:

5 (87). ԹՐՎԵՋՏԻ ՄԵՐՍՈՊԸ

(էջ 519)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Գրիգոր Կարախանյանի «Մատյան-տետրեր»):

Ասել է Հովակիմ հաշատրյանը, Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիսին: Հեքիաթի վերջում ասացողի մասին գրում է՝ «Ասել է Հովակիմ Հարությունի հաշատրյանը, անգրագետ, ծնվել է 1882 թվ. Վրացական ՍԱՀ Ախալքալաքի շրջանի Նամղարա գյուղում, պապերը էրդրումի Հղտաձոր գյուղից: Այժմ ապրում է Ախալքալաք քաղաքում: Նսել է մշեցի տղաներից 1903—1905 թթ., Երեւանում ապրած ժամանակ: Հացթուխ է (փոնջի)»:

6 (88). ՕԽՏԸ ԳՎԽԱՆԻ ԴԵՎԸ

(էջ 524)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):

Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Հովակիմ հաշատրյանը, տե՛ս № 87 ժանոթագրությունը:

7 (89). ԹԱՔԱՎՈՐՆ ՈՒ ՈՍԿԵՐՁԻՆ

(էջ 527)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):

Գրի է առել Գր. Կարախանյանը, 1959 թ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս № 83 ժանոթագրությունը: Հեքիաթը անվերնագիր էր: Վերնագիրը գրված է մեր կողմից:

**8 (90). ՔԱՔԱՎՈՐԸ ՍԱՂ ԸՆԼԻ**

(էջ 529)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):  
Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Հովակիմ Խաչատրյանը, տե՛ս № 87 ժանոթագրությունը:

**9 (91). Ք Ա Վ Ո Ր Ը**

(էջ 532)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):  
Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս № 83 ժանոթագրությունը:

**10 (92). ՔԱՔԱՎՈՐՆ ՈՒ ԴԸԾԸՐՁԻՆ**

(էջ 534)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):  
Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում: Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս, № 83 ժանոթագրությունը:  
Հեքիաթն անվերնագիր էր: Վերնագիրը դրված է մեր կողմից:

**11 (93). ԶԱՆՁԸՊԱՆԸ**

(էջ 536)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):  
Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս, № 83 ժանոթագրությունը:

**12 (94). ԱՆՁԻԿՆ ՈՒ ՕՁԸ**

(էջ 540)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ բանահյուսական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):  
Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս № 83 ժանոթագրությունը:

13 (95). ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆԸ

(էջ 542)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահայտական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):

Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիսին, Ախալքալաքի շրջա-  
նում:

Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս Ն: 83 ծանոթագրությունը,

14 (96). ԲԱՂՔԻ ԲԱՐԻՆ ԷՍ Է

(էջ 543)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահայտական արխիվում (տե՛ս, Գր. Կարախանյանի «Մատյան-տետրեր»):

Գրի է առել Գրիգոր Կարախանյանը, 1959 թվ. հուլիս ամսին, Ախալքալաքի շրջանում:

Ասել է Արմեն Կարախանյանը, տե՛ս Մ 83 ծանոթագրությունը:

15 (97). ԳԱՌՈՅԻ, ԿՈՉԱՂ-ՏՂԻ ԵՎ ՍԻՐԱՄԱՐԳԻ-ԽԱՎԻ ԽԵՓՅԱԹԸ

(էջ 544)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահայտական արխիվում (Դ. Միքայելյանի ֆոնդ): Հեքիաթը ժամանակին պատ-  
մել է Հայրո-ամին (Հայրապետ Տեր-Միքայելյանը), 1918 թ., Նոր Բայա-  
զետում, ընտանեկան միջավայրում: Հեքիաթը վերհիշելով գրի է առել ասացողի  
որդին՝ Սովետական Միության հերոս Գ. Հ. Միքայելյանը, 1965 թ., Երևանում:

Հ ա վ ե լ վ ա ծ 11

1 (98). ՖԱՂԱՔԻ ԳԱՆԳՏՎՈՐՆԵՐ

(էջ 567)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ քանահայտական արխիվում (տե՛ս, Ե. Հալալյանի ֆոնդ, գործ 1, ձեռ. Ձ 782):

Ձեռագրի առաջին էջի վրա վերևում, աջ կողմում գրված է՝ «Բաղնիշ: Նրանից  
մի փոքր ներքև գրված է «Ե. Հալալյանի խմբարշավ» կնիքը:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թվ. փետրվարի 10-ին, Թիֆ-  
լիսում: Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է՝ «Պատմեց Հաբեթ  
Հարդենյան, 28-ամյա, արհեստ՝ հացագործություն: Պոլիս—Բուլղարիա մնացեր է  
3 տարի, կիսագրագետ»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան:

(էջ 569)

2 (99). ՊԱՌՎՈՒ ԽՈՐԱԳԵՏ ՏՂԵՆ

Տպագրվում է ըստ «էմինյան ազգագրական ժողովածուի» Դ հատորում (էջ 158—160) հրատարակված տեքստի:

Գրի է առել Ս. Հայկունին, ոչ մի տեղեկություն չի հաղորդում ասացողի մասին: Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառով»:

3. (100). ԶԱԽՃՊԱՆ ԴԻՎԱՆ

(էջ 571)

Տպագրվում է ըստ «էմինյան ազգագրական ժողովածուի» հատոր Բ-ում (էջ 243—245) հրատարակված տեքստի: Գրի է առել Ս. Հայկունին. տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմած է Լևոն Տեր-Մինասյան»:

Գրառման այլ մանրամասնություններ չկան: Հեքիաթի վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Ալաշկերտի բարբառով»:

4 (101). ԱԳՈՆ ՈՒ ԲԸԴՈՆ

(էջ 574)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ րանահյուսական արխիվում (տե՛ս Ե. Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 772):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարչավ» կնիքը, նրանից վերև գրված է՝ «Բաղնիք—Բիթլիս»:

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը, որը տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 11-ին Կարաքիլիսում՝ Գարեգին Ավետիսյան, րիթմիզի, 30 տարեկան երիտասարդը: Իր հայրենիքեն դուրս յոթ տարի է Վեր ապրած է Բուլանըղի Կոփ գյուղաքաղաքի մեջ: Արհեստով դերձակ եղած է»:

5 (102). ՀՈԳԵԱՌ ՃԵՏ

(էջ 579)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ րանահյուսական արխիվում (տե՛ս Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 51):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարչավ» կնիքը:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1916 թվ. հունվարի 23-ին, Երևանում: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց տիկին Նանուխաս Աղեկյան, 35-ամյա, անգրագետ, առաջին անգամն է, որ դուրս կնիքի իր հայրենիքեն: Բաղշո բարբառի ազդեցությունը կրած է իր մորմեն»:

Ձեռագիրն ունի կարմիր թանաքով կատարված բարբառային ուղղումներ:

6 (103). ԳՈՂԵՐՈՒ ՄԱՍԻՆ

(էջ 581)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 58):

Ձեռագրի վրա կա ձեռ. Լալայանի խմբարշավա կնիքը:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թվ. դեկտեմբերի 16-ին, Երևանում: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց տիկ. Մ... Վարդանյան, զարաքիլսեցի, 60-ամյա, անդրադետ: Կովկաս եկեր է այս նահանջին»: Կան կարմիր թանաքով կատարված ուղղումներ:

7 (104). ՍՈՒՐՓ ՍԱՐՔԻՍԸ

(էջ 582)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս Վ. Բդոյանի ֆոնդ՝ «Ճուղորդ Բողգանովկայի շրջանում» տետրը, էջ 22—24):

Գրի է առել Վարդ Բդոյանը 1947 թվ., Բողգանովկայի (նախկին Ախալքալաքի) շրջանի Ուլմանա դյուղում:

Առել է Մկրտիչ Թումասյանը, ասացողի մասին բանահավաքը գրում է՝ «Ծնվել է Ուլմանայում, 1901-ին, նաշնավոր առակախոսներից է գյուղի մեջ»:

8 (105). ԻՇՈՒ ՀԱՎԿԻԹ

(էջ 585)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 56):

Ձեռագրի վրա գրված է ձեռ. Լալայանի խմբարշավա կնիքը. նրանից դեպի աջ ու վերև գրված է՝ «Ալաշկերտ—Գարաքիլիս»:

Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1915 թվ. դեկտեմբերի 15-ին, Երևանում: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց տիկ. Մ. Վարդանյան—Թաշճյան, 60-ամյա, անգրագետ»:

Ձեռագրի վրա կան կարմիր թանաքով կատարված ուղղումներ:

9 (106). ԽԵՔՅԱԹ-ԽԵՔՅԱԹ ՊԱՊՍ Է

(էջ 587)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ԳԱՀԱԻ Բանահյուսական արխիվում (տե՛ս, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 3, ձեռ. № 52):

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը:  
Գրի է առել Նազարեթ Մարտիրոսյանը, 1913 թվ. դեկտեմբերի 14-ին.  
Երևանում: Տողատակի ծանոթության մեջ գրում է՝ «Պատմեց տիկին Եպրաքսյա  
Շաքրոյան, 22.ամյա, անգրագետ, Կովկաս եկեր է այս անգամ»:  
Գրածան այլ մանրամասնություններ չկան:

